



Զահրատ

Անհաշի

Զարեն Խրախունիին

Անհաշի

Անհաշի պիտի սիրես ամեն ինչ

Ամեն ինչ սուտ կամ իրաւ

Թէ ոչ օր մ'ալ հովուն ծովուն ինչպէս հաշի պիտի տաս

Անհաշի

Պիտի խաբես կամ խաբուիս

Ամեն օր տի կամ գիշեր

Թէ ոչ օր մ'ալ հողին ջուրին ինչպէս հաշի պիտի տաս

Ու պիտի

Սիրաբանած աղջիկներուդ թիւր ճշգրիտ չգիտնաս

Կամ շղիտնաս թէ քանի գարկ սիրտն ատելի կը դարնէ

Երբ հոտն առնէ նոր սիրոյ մը խոստումին

Ապա թէ ոչ լիալուսնին ինչպէս հաշի պիտի տաս

Եւ օրերէն օր մըն ալ

Երբ Հաշուակալն յանկարծ քաշէ հաշուեփակին գիծը սէղ

Դարձեալ պէտք չէ որ գիտնաս

Քանի տարի քանի ամիս քանի օր

Ապա թէ ոչ այդ բոլորին հաշին ինչպէս պիտի տաս